



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՄԵԾ ՊԱԼԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ

(Գանգաղ թիվ 40167/06)

ՎՃԻՌ

(Արդարացի փոխհատուցում)

ԱՏՐԱՍՐՈՒՐԳ

12 դեկտեմբերի 2017թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հանդես գալով Մեծ պալատի հետեւյալ կազմով՝

Գուլիդո Ռայմոնդի [Guido Raimondi]՝ *Նախագահ,*

Անգելիկա Նուսբերգեր [Angelika Nußberger],

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Գաննա Յուդկիվսկա [Ganna Yudkivska],

Ռոբերտ Սպանո [Robert Spano],

Լուիս Լոպես Գեռռա [Luis López Guerra],

Նեբոյշա Վուչինիչ [Nebojša Vučinić],

Պոլ Լեմմենս [Paul Lemmens],

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković],

Էգիդիյուս Կյուրիս [Egidijus Kūris],

Յուլյա Մոտոկ [Iulia Motoc],

Բրանկո Լուբարդա [Branko Lubarda],

Մարտինս Միտս [Mārtiņš Mits],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Լետիֆ Հուսեյնով [Lətif Hüseynov],

Յոլիեն Շուկկինգ [Jolien Schukking]՝ *դատավորներ,*

եւ Յոհան Բոլուերթ [Johan Callewaert]՝ *Մեծ պալատի քարտուղարի տեղակալ,*

2017 թվականի սեպտեմբերի 28-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Մինաս Սարգսյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Ադրբեջանի Հանրապետության՝ 2006 թվականի օգոստոսի 11-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 40167/06) հիման վրա: Դիմումատուն մահացել է 2009 թվականին: Հետագայում գանգատով վարույթը շարունակվել է դիմումատուի այրու՝ տկն Լենա Սարգսյանի կողմից՝ ծնված 1936 թվականին, ինչպես նաեւ դիմումատուի որդու՝ պրն Վլադիմիր Սարգսյանի եւ դուստրերի՝ տկն Ծովինար եւ տկն Նինա Սարգսյանների կողմից՝ ծնված համապատասխանաբար 1957 թվականին, 1959 թվականին եւ 1966 թվականին: Տիկին Լենա Սարգսյանը մահացել է 2014 թվականին: Պարոն Վլադիմիր Սարգսյանը եւ տկն Ծովինար Սարգսյանը դիմումատուի կողմից շարունակել են վարույթը:

2. Դիմումատուին, որն ստացել էր իրավաբանական օգնություն, ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ տկն Ն. Գասպարյանն ու տկն Կ. Օհանյանը եւ Մարդու իրավունքների շահերի պաշտպանության եվրոպական կենտրոնի տնօրեն պրն Ֆիլիպ Լիչը: Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Չ. Ասգարովը:

3. 2015 թվականի հունիսի 16-ին կայացրած վճռով (հիմնական վճիռ) Մեծ պալատը մերժել է պատասխանող Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու, իրավագործության եւ

պատասխանատվության բացակայության, Դատարանի *ratione temporis* (ժամանակային) իրավասության բացակայության եւ դիմումատուի՝ իր ազգականների գերեզմանների հետ կապված իր բողոքների առնչությամբ տուժողի կարգավիճակի բացակայության հետ կապված նախնական առարկությունները: Մեծ պալատը վճռել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտում: Այն նաեւ գտել է Կոնվենցիայի 8-րդ եւ 13-րդ հոդվածների շարունակական խախտումներ եւ վճռել է, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի առնչությամբ որեւէ առանձին հարց չի առաջանում: Մասնավորապես, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ Դատարանն իր ժամանակային իրավազրության ներքո գտնվող ժամանակահատվածի, այն է՝ 2002 թվականի ապրիլի 15-ից հետո ընկած ժամանակահատվածի վերաբերյալ գտել է, որ թեեւ դիմումատուի համար Գյուլիստանում գտնվող նրա գույքին մուտք ունենալու անհնարինությունը եղել է հիմնավորված՝ անվտանգության նկատառումներից ելնելով, պատասխանող Կառավարության կողմից դիմումատուի գույքային իրավունքները վերականգնելու կամ այդ իրավունքներից օգտվելու հնարավորության կորստի դիմաց նրան հատուցում տրամադրելու նպատակով այլընտրանքային որեւէ միջոց չձեռնարկելը նրա վրա անհամաչափ բեռ է դրել (*Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի* [ՄՊ] [*Sargsyan v. Azerbaijan* [GC]], թիվ 40167/06, ՄԻԵԴ 2015):

4. Դիմումատուն, Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն, պահանջել է սույն գործով հայտնաբերված խախտումների հետեւանքով կրած նյութական եւ ոչ նյութական վնասի դիմաց արդարացի փոխհատուցում, ինչպես նաեւ հատուցում Դատարանի վարույթում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

5. Քանի որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չի եղել որոշում կայացնելու համար, Դատարանն այն հետաձգել է եւ առաջարկել Կառավարությանն ու դիմումատուին՝ տասներկու ամսվա ընթացքում ներկայացնել այդ հարցի վերաբերյալ իրենց գրավոր դիտարկումները եւ, մասնավորապես, Դատարանին ծանուցել իրենց միջեւ ձեռք բերված ցանկացած

համաձայնության վերաբերյալ (հիմնական վճռի § 283 եւ եզրափակիչ դրույթների 9-րդ կետ):

6. Քանի որ Կողմերի միջեւ համաձայնություն ձեռք չի բերվել, դիմումատուն իր դիտարկումները ներկայացրել է 2016 թվականի հունիսի 16-ին եւ դեկտեմբերի 13-ին, իսկ Կառավարությունը՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ին եւ հոկտեմբերի 24-ին:

7. Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ ու 5-րդ կետերի դրույթների եւ Դատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի համաձայն:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

8. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուն

9. Ծագումով հայ դիմումատուն, ծնված 1929 թվականին, ամուսնացած է եղել եւ ունեցել է չորս երեխա: Ընտանիքն ապրել է Գյուլիստանում՝ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Շահումյանի շրջանում

(Ադրբեջանի Հանրապետության ներկայիս Գորանբոյի շրջան), որտեղ դիմումատուն ունեցել է երկհարկանի բնակելի տուն, օժանդակ շինություններ եւ 2 160 քառ. մ հող, որի 1 500 քառ. մ-ը եղել է մրգի եւ բանջարեղենի այգի: Նա իր եկամուտն ստացել է իր աշխատավարձից՝ որպես միջնակարգ դպրոցի ուսուցիչ, եւ իր հողի վրա հողագործությամբ եւ անասնապահությամբ զբաղվելով: Նրա կինը՝ Լենա Սարգսյանը, աշխատել է գյուղի կոլեկտիվ տնտեսությունում: Դիմումատուն եւ նրա կինն իրենց կյանքի մեծ մասն ապրել են Գյուլիստանում, եւ նրանց չորս երեխաները մեծացել են այնտեղ: Նրանք ստիպված են եղել փախուստի դիմել 1992 թվականի հունիսին, երբ գյուղը Լեռնային Ղարաբաղի հակամարտության ռազմական փուլում ենթարկվել է հարձակման: Արդյունքում, դիմումատուն եւ նրա կինը Երեւանում ապրել են որպես փախստականներ: 2002 թվականին դիմումատուն ձեռք է բերել Հայաստանի քաղաքացիություն: Նա մահացել է 2009 թվականի ապրիլի 13-ին (տե՛ս հիմնական վճռի §§ 29 եւ 34-40):

10. Դիմումատուն 2012 թվականի մայիսի 21-ին ներկայացրած իր փաստարկներում, նախքան գործի ըստ էության քննությունը, պահանջել է իր գույքի ռեստիտուցիա, այդ թվում՝ Գյուլիստանում գտնվող իր գույքը վերադարձնելու եւ տուն վերադառնալու իրավունք, նյութական եւ ոչ նյութական վնասի հատուցում եւ փոխհատուցում՝ Դատարանում վարույթի ընթացքում կրած ծախսերի եւ ծախքերի համար (տե՛ս հիմնական վճռի § 281): Հիմնական վճռի կայացմանը հաջորդած իր դիտարկումներում նա պնդել է հատուցման իր պահանջը, սակայն նշել է գյուղ վերադառնալու գործնական անհնարինությունը՝ հաշվի առնելով վերջին ռազմական գործողությունները եւ ոչ կայուն հրադադարը: Նա ավելացրել է, որ ամերիկյան դոլարով (ԱՄՆ դոլար) հաշվարկված գումարները փոխարկվել են եվրոյի (եվրո)՝ սկզբնական փաստարկները ներկայացնելիս կիրառելի փոխարժեքով, եւ Դատարանին խնդրել է վերջնական գնահատում կատարելիս հաշվի առնել այդ երկու արժույթների միջեւ փոխարժեքի էական աճը:

11. Դիմումատուն պահանջել է ընդհանուր 374 814 եվրո գումար՝ որպես 1992 թվականի հունիսին Գյուլիստանից իր հարկադիր տեղահանման եւ իր գույքի տարածք վերադառնալու անկարողության հետեւանքով կրած նյութական վնասի հատուցում:

12. Նյութական վնասի մասով պահանջը կազմված է եղել իր բնակելի տան եւ օժանդակ շինությունների կորստի (16 654 եվրո), կահույքի կորստի (12 824 եվրո), անասունների եւ պտղատու ծառերի կորստի (1 644 եվրո), Ադրբեջանի խնայքանկում իր եւ իր կնոջ հաշիվներում ներդրված խնայողությունների կորստի (1 564 եվրո), եկամտի կորստի (151 260 եվրո՝ 1992-ից մինչեւ 2012 թվականների համար, այսինքն՝ իր եւ իր կնոջ աշխատավարձերի եւ իր՝ տարեկան 3 388 եվրո կենսաթոշակի կորստի եւ Գյուլիստանում գտնվող իր հողից ստացվող՝ տարեկան 4 175 եվրո եկամտի կորստի) համար հատուցումից եւ կրած վարձակալական ու ապրուստի հետ կապված լրացուցիչ ծախսերի համար փոխհատուցումից (ընդհանուր 99 447 եվրո գումար՝ 1992-ից մինչեւ 2012 թվականների համար), Հայաստանի կառավարությունից կենսաթոշակի եւ ընտանեկան նպաստի տեսքով ստացված դրամական միջոցների նկատմամբ հաշվանցումից: Հետագայում նա ներկայացրել է պահանջ իր կնոջ՝ Լենա Սարգսյանի հետագա եկամտի եւ ապրուստի հետ կապված հետագա ծախսերի մասով (91 421 եվրո):

13. Դիմումատուն բնակելի տան առնչությամբ վկայակոչել է Դատարանի՝ հիմնական վճռում առկա եզրահանգումները, համաձայն որոնց՝ նրա բնակելի տունը դեռ գոյություն է ունեցել (նույն տեղում, §§ 197-198): Նա տրամադրել է երեք տարբեր գնահատումներ. նախ, բնակելի տան՝ 1991 թվականի մայիսին տրված տեխնիկական անձնագրում պարունակվող գնահատումը ԽՍՀՄ ռուբլով՝ փոխարկված ԱՄՆ դոլարի՝ 1992 թվականի հունիսի դրությամբ գործող փոխարժեքով, երկրորդ, Լենա Սարգսյանի կողմից տրամադրված գնահատումը՝ հիմնված այն փաստարկի վրա, որ 1991 թվականին ԽՍՀՄ ռուբլու արժեզրկման հետեւանքով տեխնիկական անձնագրում առկա՝ 1992 թվականի հունիսի դրությամբ գործող փոխարժեքով ԱՄՆ դոլարի փոխարկված կադաստրային

արժեքը ճշգրտորեն չէր արտացոլում բնակելի տան արժեքը, եւ երրորդ, 2012 թվականի ապրիլին Հայաստանի կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի կողմից տրամադրված գնահատումը, որում դիմումատուի բնակելի տունը համեմատվում էր Հայաստանի համեմատելի գյուղի նմանատիպ բնակելի տների հետ՝ դրա արժեքը գնահատելով 21 403 ԱՄՆ դոլար (կամ 16 654 եվրո՝ 2012 թվականի մայիսին պահանջը ներկայացնելու պահին):

14. Գյուլիստանում գտնվող իր հողից ստացվող եկամտի կորստի առնչությամբ դիմումատուն նշել է, որ նա իր հողում անասուններ է պահել եւ մրգեր ու բանջարեղեն է աճեցրել: Արտադրանքի մի մասն ընտանիքի սեփական սպառման համար է եղել, իսկ մի մասը վաճառվել է: Այդ մասով կորուստը նա գնահատել է տարեկան 4 175 եվրո՝ արտադրանքի արժեքը ԽՍՀՄ ռուբլուց փոխարկելով ԱՄՆ դոլարի եւ այնուհետեւ՝ եվրոյի: Կրած վարձակալական եւ ապրուստի հետ կապված լրացուցիչ ծախսերի առնչությամբ նա ներկայացրել է Երեւանում գտնվող հանրակացարանի բնակարանի բնակարանային վճարների վճարման մի շարք անդորրագրեր: Համաձայն Լենա Սարգսյանի՝ 2012 թվականի մայիսի 21-ին ներկայացված փաստարկներին կից հայտարարության՝ այդ բնակարանը 2001 թվականին Հայաստանի [Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի եւ] փախստականների վարչության կողմից հատկացվել է դիմումատուին եւ իրեն, եւ նրանք հետագայում կարողացել են այն մասնավորեցնել: Ի հավելումն դրա՝ դիմումատուն ներկայացրել է էլեկտրաէներգիայի եւ ջրի վարձավճարների կտրոններ եւ Հայաստանի սոցիալական ծառայությունների կողմից տրամադրված ցանկ՝ 2003-ից մինչեւ 2012 թվականները կենսաթոշակի եւ ընտանեկան նպաստի վճարման վերաբերյալ: Նյութական վնասի մյուս մասերի առնչությամբ դիմումատուն նաեւ տրամադրել է մանրամասներ հաշվարկման մեթոդի վերաբերյալ եւ մի շարք օժանդակ փաստաթղթեր:

15. Ավելին, դիմումատուն նշել է, որ Դատարանը նաեւ տրամադրել է ուղղորդում՝ իր իրավիճակում գտնվող անհատների կրած նյութական վնասի

փոխհատուցման մեթոդի եւ սկզբունքի վերաբերյալ՝ վկայակոչելով համապատասխան միջազգային չափանիշները, մասնավորապես՝ ՄԱԿ-ի՝ «Փախստականների եւ տեղահանման ենթարկված անձանց համար տան ու գույքի ռեստիտուցիայի վերաբերյալ սկզբունքները» (Պինեյրոյի սկզբունքներ) եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Փախստականների եւ տեղահանման ենթարկված անձանց գույքային հարցերի կարգավորման» վերաբերյալ թիվ 178 (2010) բանաձեւը (հիմնական վճռի § 238):

16. Դիմումատուի մերձավոր ազգականները, որոնք նրա մահվանից հետո շարունակում են գանգատով վարույթը, ոչ նյութական վնասի առնչությամբ հայտարարել են, որ այդ պահանջը ներկայացվել է իրենց անունից եւ դիմումատուի անունից: Նրանք պահանջել են ընդհանուր 190 000 եվրո գումար՝ վկայակոչելով իրենց եւ դիմումատուի՝ այն երկար տարիներ շարունակ կրած տանջանքները եւ անօգնական վիճակն ու հիասթափությունը, որոնց ընթացքում նրանք չեն կարողացել օգտվել Գյուլիստանում գտնվող իրենց գույքից ու տնից եւ այցելել իրենց բարեկամների՝ այնտեղ գտնվող գերեզմանները:

17. Վերջապես, դիմումատուն վիճարկել է Կառավարության այն տեսանկյունը, որ իր գույքին եւ տուն մուտք ունենալու անհնարինությունը Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքի զգալի մասի գրավման հետեւանքով էր, նշելով, որ այդ տեսանկյունը տարբերվում էր Դատարանի՝ հիմնական վճռում առկա եզրահանգումներից (նույն տեղում, §§ 134-137 եւ 151):

բ) Կառավարությունը

18. Կառավարությունն իր հերթին պնդել է, որ ռեստիտուցիան անհնար էր: Այն վկայակոչել է Դատարանի այն եզրահանգումները, որ դիմումատուն Գյուլիստանում դեռեւս ուներ բնակելի տուն (հիմնական վճռի §§ 197-198), սակայն ընդգծել է այն, որ համաձայն Դատարանի գնահատման՝ դիմումատուի կամ ցանկացած քաղաքացիական անձի մուտքը գյուղ մերժելը հիմնավորված էր

անվտանգության նկատառումներով (նույն տեղում, § 233): Հետեւաբար, այն չէր կարող տրամադրել դիմումատուի գույքի ռեստիտուցիա, սակայն պետք է ձեռնարկեր այլընտրանքային միջոցներ՝ նրա գույքային իրավունքներն ապահովելու համար (նույն տեղում, § 234):

19. Կառավարությունը, վկայակոչելով Դատարանի՝ հիմնական վճռում առկա եզրահանգումները, համաձայն որոնց՝ Գյուլիստանում իր իշխանությունն իրականացնելիս գործնական դժվարությունները պետք է հաշվի առնվեին բողոքարկվող գործողությունների կամ անգործության համաչափությունը գնահատելիս (նույն տեղում, § 150), պնդել է, որ արդարացի փոխհատուցման առնչությամբ պետք է ցուցաբերել նմանատիպ մոտեցում: Հատուցման շնորհված գումարները պետք է ողջամտորեն համաչափ լինեն դիմումատուի գույքային իրավունքների խախտման առնչությամբ իր պատասխանատվության աստիճանին: Ի հավելումն դրա՝ Ադրբեջանի իշխանությունների կողմից հոգուտ ներքին տեղահանման ենթարկված մեծ թվով անձանց ձեռնարկված միջոցները պետք է հաշվի առնվեին դիմումատուի պահանջները գնահատելիս:

20. Կառավարությունը նյութական վնասի առնչությամբ ներկայացրել է, որ դիմումատուի պահանջի մի մասը կապված էր այնպիսի փաստերի հետ, որոնք դուրս էին Դատարանի *ratione temporis* իրավասության շրջանակներից: Մասնավորապես, Կառավարությունը պնդել է, որ այն չէր կարող պատասխանատվություն կրել 1992 թվականի հունիսին դիմումատուի տեղահանման կամ զինված հակամարտության ընթացքում բնակելի տանը կամ նրա այլ իրերի հասցված որեւէ վնասի համար:

21. Այդ հիմնական պնդումների հիման վրա Կառավարությունը մանրամասնորեն վիճարկել է դիմումատուի՝ նյութական վնասի տարբեր մասերով ներկայացված պահանջները: Մասնավորապես, այն վիճարկել է, որ դիմումատուն հատուցում էր պահանջել հենց բնակելի տան արժեքի դիմաց, սակայն, ըստ իրենց, նա պահանջներ չէր ներկայացրել Գյուլիստանում գտնվող իր գույքի

օգտագործման հնարավորությունը կորցնելու հետեանքով իր գույքային իրավունքների շարունակական խախտման մասով:

22. Ինչ վերաբերում է եկամտի կորստի հետ կապված պահանջին, ապա Կառավարությունը նշել է, որ դիմումատուի այրին՝ Լենա Սարգսյանը, անձամբ Դատարանում դիմումատու չէր եղել: Հետեաբար, նրա եկամտի կորստի հետ կապված վավեր պահանջ չէր կարող ներկայացվել: Ավելին, դիմումատուի եկամտի կորստի հետ կապված պահանջները նրա մահվանից հետո չէին կարող շարունակվել: Կառավարությունը նաեւ վիճարկել է վարձակալական եւ ապրուստի հետ կապված լրացուցիչ ծախսերի եւ ապրուստի հետ կապված հետագա ծախսերի դիմաց փոխհատուցման հետ կապված պահանջը՝ նշելով, որ համաձայն Լենա Սարգսյանի հայտարարության, որը կցված էր 2012 թվականի մայիսի 21-ին ներկայացված փաստարկներին, նրան եւ դիմումատուին Հայաստանում 2001 թվականին բնակարան էր տրամադրվել, եւ նրանք Հայաստանի կառավարությունից ստացել էին կենսաթոշակ եւ ընտանեկան նպաստ:

23. Ոչ նյութական վնասի առնչությամբ, Կառավարությունը համարել է, որ խախտման հայտնաբերումն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում է: Այն ընդունել է, որ փախստականներն իրենց գույքին, իրենց տներին եւ իրենց բարեկամների գերեզմաններ մուտք ունենալու անհնարինության հետեանքով կրել են ոչ նյութական վնաս: Այնուամենայնիվ, սույն գործով այդ անհնարինությունն ըստ էության կապված էր Ադրբեջանի տարածքի զգալի մասի գրավման հետ եւ 2016 թվականի ապրիլին շփման գծում ռազմական այնպիսի գործողությունների վերսկսման հետ, որոնք ներառում են քաղաքների եւ գյուղերի ծանր հրետանային ռմբակոծություններ, *inter alia* (ի թիվս այլնի), Գորանբոյի շրջանում, որտեղ գտնվում է Գյուլիստանը:

24. Ի հավելումն դրա՝ այն կասկածի տակ է դրել ընտանիքի ողջ մնացած անդամների՝ իրենց անունից ոչ նյութական վնասի դիմաց շնորհում ստանալու իրավասությունը եւ արտահայտել է այն կարծիքը, որ ոչ նյութական վնասի մասով

դիմումատուի անունից ներկայացված ցանկացած պահանջ նրա մահվամբ վերացել էր:

2. Դատարանի գնահատականը

ա) Նախնական դիտարկումներ

25. Արդարացի փոխհատուցման հարցը հիմնական վճռով հետագա փուլ հետաձգելիս Դատարանն անդրադարձել է այս գործի առանձնահատուկ բնույթին (նույն տեղում, § 283):

26. Այդ առանձնահատուկ բնույթը պայմանավորված է մի շարք հատկանիշներով: Դրանցից մեկն այն է, որ սույն գործը կապված է շարունակվող հակամարտության հետ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության ակտիվ ռազմական փուլն ընթացել է 1992-1994 թվականներին, սակայն, չնայած 1994 թվականի մայիսին կնքված՝ հրադադարի մասին համաձայնագրին եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում անցկացված բանակցություններին, խաղաղության համաձայնագիր ձեռք չի բերվել (նախապատմության եւ ընթացիկ իրավիճակի առավել մանրամասն նկարագրության համար տե՛ս հիմնական վճռի §§ 14-28): Քսաներեք տարի անց շարունակվում են տեղի ունենալ հրադադարի մասին համաձայնագրի խախտումներ: Ինչպես երկու կողմերն արդարացի փոխհատուցման վերաբերյալ իրենց դիտարկումներում նշել են, շփման գծում բռնության դեպքերը վերջերս ավելացել են, հատկապես՝ 2016 թվականի ապրիլի սկզբի ռազմական բախումների ընթացքում:

27. Գործի հետ կապված մեկ այլ առանձնակի ասպեկտն այն է, որ թեեւ այն իրադարձությունները, որոնք ստիպել են դիմումատուին փախուստի դիմել՝ թողնելով իր գույքը եւ տունը, տեղի են ունեցել 1992 թվականի հունիսին, պատասխանող պետությունը՝ Ադրբեջանի Հանրապետությունը, Կոնվենցիան վավերացրել է տասը տարի անց՝ 2002 թվականի ապրիլի 15-ին: Ուստի, մինչեւ

2002 թվականի ապրիլի 15-ը տեղի ունեցած իրադարձությունների մասով *ratione temporis* իրավագորություն չունենալով՝ Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուն դեռևս ունի գործող գույքային իրավունքներ Գյուլիստանում գտնվող բնակելի տան եւ հողի նկատմամբ (հիմնական վճռի §§ 198 եւ 205): Դատարանն Ադրբեջանին պատասխանատու է համարել դիմումատուի՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով եւ Կոնվենցիայի 8-րդ եւ 13-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների շարունակական խախտումների համար՝ սկսած Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից (նույն տեղում, §§ 241-242, 260-261 եւ 273-274):

28. Ուստի, Դատարանը գործ ունի շարունակվող մի իրավիճակի հետ, որի արմատներն ընկած են Լեռնային Ղարաբաղի եւ հարակից տարածքների շուրջ չլուծված հակամարտության մեջ, եւ որը դեռևս ազդեցություն է ունենում մեծ թվով անհատների վրա: Դատարան են մուտք եղել հակամարտության ընթացքում տեղահանման ենթարկված անձանց կողմից ներկայացված ավելի քան հազար անհատական գանգատներ, որոնց կեսից փոքր-ինչ ավելին ուղղված են Հայաստանի դեմ, իսկ մնացածը՝ Ադրբեջանի: Այդ գործերով դիմումատուները ներկայացնում են նախնական հաշվարկով մեկ միլիոնը գերազանցող այն անձանց միայն փոքր մասը, որոնք ստիպված են եղել փախուստի դիմել հակամարտության ընթացքում եւ այդ ժամանակվանից ի վեր չեն կարողացել վերադառնալ այնտեղ, որտեղ իրենց գույքն ու տներն են, կամ հատուցում ստանալ՝ դրանցից օգտվելու իրավունքի կորստի համար:

29. Այս կապակցությամբ, Դատարանը նպատակահարմար է համարում եւս մեկ անգամ ընդգծել լրացուցչության (սուբսիդիարության) սկզբունքը: Սույն գործում այն ունի եւ՝ քաղաքական, եւ՝ իրավական կողմ:

30. Ինչ վերաբերում է քաղաքական կողմին, ապա Դատարանն արդեն անդրադարձել է՝ նախքան Եվրոպայի խորհրդին անդամակցելը, Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման մասով ստանձնած պարտավորություններին (հիմնական վճռի § 76):

Մինչ այժմ Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից Կոնվենցիան վավերացվելուց ի վեր անցել է մոտ տասնհինգ տարի՝ առանց հակամարտությանը քաղաքական լուծում տալու որեւէ հեռանկար ունենալու: Դատարանը միայն կարող է ընդգծել, որ քաղաքական մակարդակով լուծում գտնելը ներգրավված երկու պետությունների պարտավորությունն է (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Կովաչիչը եւ այլք ընդդեմ Սլովենիայի* [ՄՊ] [*Kovačić and Others v. Slovenia*][GC]], թիվ 44574/98 եւ մյուս 2-ը, §§ 255-256, 2008 թվականի հոկտեմբերի 3, եւ *Դեմոպուլոսը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [ՄՊ] [*Demopoulos and Others v. Turkey (dec.)*][GC]], թիվ 46113/99 եւ մյուս 7-ը, § 85, ՄԻԵԴ 2010):

31. Անդրադառնալով իրավական կողմին՝ Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի համակարգի հիմքում ընկած է լրացուցչության սկզբունքը (*Կուրիչը եւ այլք ընդդեմ Սլովենիայի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Kurić and Others v. Slovenia* (just satisfaction) [GC]], թիվ 26828/06, § 134, ՄԻԵԴ 2014, եւ դրանում հիշատակված գործերը): Այդ սկզբունքը ձեւակերպված է Կոնվենցիայի 1-ին հոդվածում, համաձայն որի՝ Պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները, մինչդեռ, համաձայն 19-րդ հոդվածի, պետությունների կողմից Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովում է Դատարանը: Ավելին, սկզբունքն ընկած է դիմումատուների կողմից, 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառելու եւ 13-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող պետությունների՝ Կոնվենցիայի խախտումների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ տրամադրելու համապատասխան պարտավորության վերաբերյալ պահանջի հիմքում (*Ակդիվարը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Akdivar and Others v. Turkey*], 1996 թվականի սեպտեմբերի 16, § 65, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ*

1996-IV. *Դեմոպուլոսը եւ այլք ընդդեմ Թուրքիայի*¹ վերելում հիշատակված, § 69): Դատարանը նույնպես իր՝ Կոնվենցիայի պարբերական խախտումներին առնչվող մոտեցման մեջ առաջնորդվում է լրացուցչության սկզբունքով՝ 46-րդ հոդվածի համաձայն մշակված՝ պիլոտային վճիռների կայացման ընթացակարգը կիրառելիս (տե՛ս, օրինակ, *Ալիշիչը եւ այլք ընդդեմ Բոսնիա եւ Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի եւ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]], թիվ 60642/08, § 143, ՄԻԵԴ 2014):

32. Ավելին, Դատարանը, ինչպես ընդգծել է լուծում չստացած հակամարտություններից բխող այլ գործերով կամ պարբերական խախտումներ բացահայտող գործերով, չի դադարում ընդգծել, որ այն առաջին ատյանի դատարանն է: Դատարանը չունի կարողություն եւ ոչ էլ դա համապատասխանում է՝ որպես միջազգային դատարան, իր գործառույթին՝ քննել մեծ թվով գործեր, որոնց դեպքում պահանջվում է պարզել կոնկրետ փաստեր կամ հաշվարկել դրամական հատուցումը, որոնք երկուսն էլ, սկզբունքորեն եւ որպես արդյունավետ գործելակերպ, պետք է լինեն ներպետական մարմնի իրավազորության տիրույթում (տե՛ս, *mutatis mutandis*, *Դեմոպուլոսը եւ այլք*¹ վերելում հիշատակված, § 69, եւ *Ալիշիչը եւ այլք*² վերելում հիշատակված, § 142-143):

33. Հատկապես Կառավարության կողմից անդամակցության հետ կապված հանձնառությունները, ինչպես նաեւ իր՝ Կոնվենցիայով սահմանված պարտավորությունները չկատարելու պատճառով է Դատարանը ստիպված եղել սույն գործով հանդես գալ որպես առաջին ատյանի դատարան՝ հաստատելով շատ տարիների վաղեմություն ունեցող համապատասխան փաստերը, գնահատելով գույքային պահանջներին առնչվող ապացույցները եւ, վերջապես, գնահատելով դրամական հատուցման չափը: Այս ամենը պետք է դիտարկել այն տեսանկյունից, որ սույն գանգատը քննվում է որպես գերակա նախադեպային

գործ, մինչդեռ Դատարանի կողմից դեռևս քննվում են Ադրբեջանի դեմ բերված հարյուրավոր նմանատիպ գործեր:

34. Չբացառելով սույն գործով որպես արդարացի փոխհատուցում տրամադրվող որեւէ հատուցում՝ հիմնական վճռի արդյունավետ եւ կառուցողական ձեւով կատարման համար պահանջվում է ազգային մակարդակով ընդհանուր միջոցների ստեղծում: Հիմնական վճռում տրվել է համապատասխան միջոցների վերաբերյալ ուղղորդում, որտեղ Դատարանը *inter alia* նշել է, որ «երբ դեռևս չկա խաղաղության համապարփակ համաձայնագիր, թերևս հատկապես կարևոր է գույքի վերաբերյալ պահանջներ ներկայացնելու այնպիսի մեխանիզմներ մշակելը, որոնք կլինեն դյուրամատչելի, եւ որոնցով կապահովվեն ապացուցողական ճկուն չափանիշներով գործող ընթացակարգեր՝ հնարավորություն տալով դիմումատուին եւ նրա իրավիճակում գտնվող այլ անձանց վերականգնելու իրենց գույքային իրավունքներն ու ստանալու հատուցում իրենց գույքից օգտվելու իրավունքը կորցնելու համար» (նույն տեղում, § 238):

բ) Արդարացի փոխհատուցման վերաբերյալ ընդհանուր սկզբունքները

35. Դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ այն վճռով, որով Դատարանը խախտում է հայտնաբերում, պատասխանող պետության վրա սովորաբար դրվում է խախտումը դադարեցնելու եւ դրա հետեանքների համար այնպիսի եղանակով հատուցում տրամադրելու իրավական պարտավորություն, որպեսզի հնարավորինս վերականգնվի մինչեւ խախտումը գոյություն ունեցած իրավիճակը (*Կուրիչը եւ այլք՝ վերելում հիշատակված, § 79*): Պայմանավորվող պետությունները, որոնք գործի կողմեր են, սկզբունքորեն ազատ են ընտրելու այն միջոցները, որոնցով կատարելու են այն վճիռը, որով Դատարանը խախտում է հայտնաբերել: Վճռի կատարման եղանակի մասով հայեցողությունն արտացոլում է ընտրություն կատարելու ազատությունը՝ երաշխավորված իրավունքներն ու ազատություններն ապահովելու՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պարտավորությունը

դասելով Պայմանավորվող պետությունների առաջնային պարտավորությունների շարքին: Եթե խախտման բնույթը թույլ է տալիս *restitutio in integrum* (ամբողջական ռեստիտուցիա), ապա պատասխանող պետությունն ինքը պետք է դա իրականացնի, քանի որ Դատարանը դա անելու ո՛չ լիազորություն ունի, ո՛չ էլ գործնական հնարավորություն: Մյուս կողմից, եթե ազգային իրավունքով հատուցում չի թույլատրվում կամ թույլատրվում է մասնակի հատուցում, ապա 41-րդ հոդվածով Դատարանին շնորհվում է տուժած կողմին այնպիսի փոխհատուցում տրամադրելու լիազորություն, որն այն նպատակահարմար է համարում (*Պապամիխալոպուլոսը եւ այլք ընդդեմ Հունաստանի [Papamichalopoulos and Others v. Greece]*, (50-րդ հոդված), 1995 թվականի հոկտեմբերի 31, § 34, շարք Ա թիվ 330-Բ. *Կուրիչը եւ այլք՝ վերետում հիշատակված, § 80, եւ դրանում հիշատակված գործերը*): Այս առնչությամբ պետք է ընդգծել Նախարարների կոմիտեի՝ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ Դատարանի վճիռների կատարումը վերահսկելու դերը (տե՛ս *Ֆերայն գեգեն Թիերֆաբրիկեն Շվայցն (ՖգԹ) ընդդեմ Շվեյցարիայի (թիվ 2) [ՄՊ] [Verein gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (no. 2) [GC]]*, թիվ 32772/02, §§ 84-88, ՄԻԵԴ 2009): Այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ որոշ իրավիճակներ, հատկապես՝ երկարատեւ հակամարտություններին առնչվողները, իրականում ամբողջական հատուցման ենթակա չեն:

36. Ինչ վերաբերում է նյութական կորստի մասով պահանջներին, ապա Դատարանի նախադեպային իրավունքով սահմանվում է, որ դիմումատուի պահանջած վնասի փոխհատուցման եւ Կոնվենցիայի խախտման միջեւ պետք է լինի հստակ պատճառահետեւանքային կապ: Համապատասխան դեպքերում դա կարող է ներառել վաստակի կորստի դիմաց հատուցում (*Կուրիչը եւ այլք՝ վերետում հիշատակված, § 81*):

37. Ինչ վերաբերում է անշարժ գույքի հետ կապված կորստին, ապա այն դեպքում, երբ գույքից զրկում տեղի չի ունեցել, բայց դիմումատուին թույլ չի տրվել մուտք ունենալ գույքին եւ, հետեւաբար, նա զրկվել է այն օգտագործելու եւ

դրանից օգտվելու հնարավորությունից, Դատարանի ընդհանուր մոտեցումն է՝ գնահատել կրած կորուստը՝ հաշվի առնելով հողերի վարձակալության՝ ըստ գույքի շուկայական արժեքի տոկոսի չափի հաշվարկված տարեկան վճարը, որը համապատասխան ժամանակահատվածում հնարավոր էր վաստակել այդ գույքի միջոցով (*Լոիզիդու ընդդեմ Թուրքիայի* [*Loizidou v. Turkey*] (հոդված 50), 1998 թվականի հուլիսի 28, § 33, *Ջեկոյցներ* 1998 IV):

38. Դիմումատուի կրած նյութական կորստի մասով հատուցում կատարելու համար անհրաժեշտ գումարների ճշգրիտ հաշվարկի համար խոչընդոտ կարող է լինել խախտումից բխող վնասի՝ ըստ էության ոչ հստակ բնույթը: Շնորհում, այնուամենայնիվ, կարող է կատարվել՝ չնայած հետագա կորուստների գնահատման մեջ պարունակվող մի շարք անկանխատեսելի գործոններին, սակայն ինչքան մեծ է ներառված անցած ժամանակահատվածը, այնքան ոչ հստակ է դառնում խախտման եւ վնասի միջեւ կապը: Այդպիսի գործերում այն հարցը, որի վերաբերյալ պետք է որոշում կայացնել, այն արդարացի փոխհատուցման չափն է՝ եւ՛ անցյալ, եւ՛ հետագա նյութական վնասի դիմաց, որը պետք է շնորհվի դիմումատուին՝ հարց, որը որոշվում է Դատարանի հայեցողությամբ՝ հաշվի առնելով, թե ինչն է արդարացի (*Կուրիչը եւ այլք՝ վերելում հիշատակված*, § 82):

39. Բացի այդ, Դատարանը կրկին նշում է, որ ոչ նյութական կամ բարոյական վնասի վերաբերյալ որեւէ հստակ ձեւակերպված դրույթ չկա: *Վարնավան եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Varnava and Others v. Turkey*] ([ՄՊ], թիվ 16064/90 եւ մյուս 8-ը, § 224, ՄԻԵԴ 2009) եւ *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի* [*Cyprus v. Turkey*] ((արդարացի փոխհատուցում) [ՄՊ], թիվ 25781/94, § 56, ՄԻԵԴ 2014) գործերով Դատարանը հաստատել է հետեւյալ սկզբունքները, որոնք աստիճանաբար ընդգրկվել են դրա նախադեպային իրավունքում: Այն իրավիճակները, որոնց դեպքում դիմումատուն կրել է ակնհայտ տրավմա՝ ֆիզիկական կամ հոգեբանական, ապրել է ցավ եւ տառապանք, տագնապ, անհանգստություն, հիասթափություն, անարդարության կամ նվաստացման

զգացումներ, երկար ժամանակահատվածով անորոշություն, կյանքի խաթարում կամ հնարավորությունների իրական կորուստ, կարելի է տարբերակել այնպիսի իրավիճակներից, որոնց դեպքում դիմումատուի նկատմամբ կատարված խախտման մասով հանրային պաշտպանությունը Պայմանավորվող պետության համար պարտադիր ուժ ունեցող վճռի միջոցով արդեն իսկ փոխհատուցման պատշաճ եղանակ է: Որոշ իրավիճակներում, երբ օրենքը, ընթացակարգը կամ գործելակերպը չեն համապատասխանում Կոնվենցիայի չափանիշներին, դա բավարար է խնդիրը լուծելու համար: Այնուամենայնիվ, այլ իրավիճակներում խախտման ազդեցությունը կարող է համարվել այնպիսի բնույթի եւ աստիճանի, որ զգալիորեն խոչընդոտի դիմումատուի բարոյական բարեկեցությունն այնքանով, որ հետագա քայլերի անհրաժեշտություն առաջանա: Այդպիսի տարրերը ենթակա չեն հաշվարկման կամ քանակության ճշգրիտ որոշման գործընթացի: Եվ ոչ էլ Դատարանի խնդիրն է քաղաքացիական գործով կողմերի միջեւ մեղքի եւ հատուցման ենթակա վնասների բաշխում կատարելիս գործել քաղաքացիական իրավախախտումների մեխանիզմ ունեցող ներպետական դատարանին համարժեք: Դրա ղեկավար սկզբունքն արդարությունն է, որը նախեստառջ ենթադրում է ճկունություն եւ գործի բոլոր հանգամանքների օբյեկտիվ գնահատում առ այն, թե ինչն է արդար, արդարացի եւ ողջամիտ՝ հաշվի առնելով ոչ միայն այն իրավիճակը, որում գտնվում է դիմումատուն, այլեւ խախտման առաջացման ընդհանուր համատեքստը: Դրա ոչ նյութական շնորհումները նպաստում են այն փաստի ճանաչմանը, որ բարոյական վնասն առաջացել է մարդու հիմնարար իրավունքի խախտման հետեւանքով, եւ ամենալայն իմաստով արտացոլում են վնասի ծանրության աստիճանը:

40. Վերջապես, Դատարանը նկատում է, որ գործի կոնկրետ հանգամանքներից կախված՝ կարող է նպատակահարմար լինել նյութական եւ ոչ նյութական վնասի դիմաց ընդհանուր շնորհում տրամադրելը (*Սենտրո Եվրոպա 7 Ս.ռ.Լ-ն եւ Դի Սպեֆանոն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy* [GC]], թիվ 38433/09, §§ 218-222, ՄԻԵԴ 2012):

գ) Սույն գործով վնասների դիմաց շնորհում տրամադրելը*ի) Ընդհանուր նկատառումները*

41. Եզրահանգելով, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտում, Դատարանն ընդունել է, որ քաղաքացիական անձանց, այդ թվում՝ դիմումատուի մուտքը Գյուլիստան մերժելը հիմնավորված էր անվտանգության նկատառումներով, քանի որ այն տեղակայված էր ռազմական գործողությունների տարածքում: Այնուամենայնիվ, Դատարանը համարել է, որ քանի դեռ դիմումատուի գույքին մուտք ունենալն անհնար է, պետությունն ունի այլընտրանքային միջոցներ ձեռնարկելու պարտավորություն, որպեսզի ապահովի նրա գույքային իրավունքները (հիմնական վճռի §§ 233-234): Դատարանը նշել է, որ պատասխանող Կառավարությունը պարտավոր էր ներքին տեղահանման ենթարկված անձանց լայն հասարակությանը նյութապես ապահովել, սակայն գտել է, որ այդ խմբին պաշտպանելը Կառավարությանն ամբողջապես չէր ազատում այլ խմբի, մասնավորապես՝ հակամարտության ժամանակ դիմումատուի նման փախուստի դիմած հայերի նկատմամբ ունեցած պարտավորություններից (նույն տեղում, §§ 239-240): Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի համար Գյուլիստանում գտնվող նրա գույքին մուտք ունենալու անհնարինությունը՝ Կառավարության կողմից դիմումատուին այդ իրավունքներից օգտվելու հնարավորության կորստի դիմաց նրան հատուցում տրամադրելու նպատակով այլընտրանքային որեւէ միջոց չձեռնարկվելու պարագայում, եղել է եւ շարունակել է անհամաչափ բեռ լինել նրա վրա (նույն տեղում, § 241): Դատարանը հիմնվել է նույն նկատառումների վրա, երբ եզրահանգել է, որ Կառավարության կողմից դիմումատուի իրավունքները վերականգնելու կամ այդ իրավունքներից օգտվելու հնարավորության կորստի դիմաց նրան առնվազն հատուցում տրամադրելու նպատակով այլընտրանքային որեւէ միջոց չձեռնարկվելու պարագայում տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շարունակական խախտում՝ հաշվի առնելով

նրա համար Գյուլիստանում գտնվող իր գույքին եւ հարազատների գերեզմաններին մուտք ունենալու անհնարինությունը (նույն տեղում, §§ 259-261): Վերջապես, այդ խախտումների մասով առկա չի եղել եւ մինչ այդ առկա չէր իրավական պաշտպանության հասանելի արդյունավետ միջոց (§ 273):

42. Դիմումատուն սկզբնապես պահանջել էր իր գույքի ռեստիտուցիա, այդ թվում՝ Գյուլիստանում գտնվող այն տարածք վերադառնալու իրավունք, որտեղ իր գույքն ու տունն է, սակայն հիմնական վճռից հետո չի պնդել այդ պահանջը՝ նշելով գյուղ վերադառնալու անհնարինությունը՝ հաշվի առնելով անվտանգության գերիշխող իրավիճակը (տե՛ս վերելում՝ 10-րդ պարբերությունը): Ուստի, հատուցում շնորհելը սույն գործով պատշաճ արդարացի փոխհատուցում է:

43. Դատարանը կրկին նշում է, որ 2002 թվականի ապրիլի 15-ից սկսած՝ գործը Դատարանի *ratione temporis* իրավասության շրջանակ է բերել այն եզրահանգումը, որ դիմումատուն դեռեւս ունի գործող գույքային իրավունքներ Գյուլիստանում գտնվող իր բնակելի տան եւ հողի նկատմամբ (հիմնական վճռի §§ 205 եւ 215): Դրանից նախ հետեւում է, որ գրեթե տասը տարի տեւողությամբ ժամանակահատվածը, որի ընթացքում գոյություն է ունեցել բողոքարկվող շարունակական իրավիճակը, դուրս է Դատարանի ժամանակային իրավագործության սահմաններից, եւ որ մինչեւ 2002 թվականի ապրիլի 15-ը դիմումատուի կրած ցանկացած վնաս անմիջականորեն կապված չէ Դատարանի կողմից հայտնաբերված խախտումների հետ եւ, հետեւաբար, չի կարող հատուցվել Կոնվենցիային 41-րդ հոդվածի համաձայն: Երկրորդ, քանի որ դիմումատուն չի զրկվել իր գույքային իրավունքներից, ապա հատուցում, որպես այդպիսին, կարող է շնորհվել ոչ թե նրա բնակելի տան եւ հողի համար, այլ միայն իր գույքի օգտագործման կորստի համար:

ii) *Նյութական վնասը*

α) *Դիմումատուի բնակելի տունը*

44. Ինչ վերաբերում է դիմումատուի բնակելի տանը, ապա Դատարանը նշում է, որ համաձայն հիմնական վճռում իր կողմից արված եզրահանգումների, 2002 թվականի ապրիլին, երբ Կոնվենցիան ուժի մեջ է մտել Ադրբեջանի համար, այն դեռևս գոյություն է ունեցել, սակայն եղել է վատ վիճակում (նույն տեղում, §§ 197-198): Դիմումատուն հատուցում է պահանջում բնակելի տան արժեքի համար, քանի որ այն ժամանակ, երբ նա 1992 թվականի հունիսին ստիպված է եղել փախուստի դիմել Գյուլիստանից, այն կանգուն է եղել: Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող դիմումատուին հատուցում շնորհել բնակելի տանը հասցված այն վնասի համար, որն առաջացել է՝ նախքան Կոնվենցիան ուժի մեջ մտնելը (ի հակադրություն դրա՝ *Դոդանը եւ այլք ընդդեմ Թուրքիայի [Doğan and Others v. Turke]* (արդարացի փոխհատուցում), թիվ 8803/02 եւ մյուս 14-ը, §§ 52-53, 2006 թվականի հուլիսի 13, որում դիմումատուներին հարավ-արեւելյան Թուրքիայում գտնվող իրենց գյուղից վտարելիս Կոնվենցիան ուժի մեջ է եղել, եւ Դատարանը նրանց շնորհել է հատուցում այն հաջորդող տարիների ընթացքում բնակելի տների վիճակի վատթարացման համար, որոնց ընթացքում նրանց վերադարձը խոչընդոտվել է): Հետեւաբար, սույն մասով որեւէ շնորհում չի կարող տրամադրվել:

β) *Կահույքի, անասունների եւ պտղատու ծառերի կորուստը*

45. Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից պահանջվող փոխհատուցմանը կահույքի կորստի, ինչպես նաեւ անասունների եւ պտղատու ծառերի կորստի համար, ապա Դատարանը նկատում է, որ գրեթե տասը տարի է անցել դիմումատուի՝ 1992 թվականի հունիսին Գյուլիստանից հեռանալու եւ 2002 թվականի ապրիլին Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջեւ: Այդպիսի զգալի

Ժամանակահատվածի ընթացքում ցանկացած կահույք առնվազն խիստ կվնասվեր, եթե այն ընդհանրապես օգտագործման ոչ ենթակա դարձած չլիներ: Նույնը վերաբերում է անասուններին, որոնք պետք է որ սատկած լինեին՝ նախքան Կոնվենցիան ուժի մեջ մտնելը, եւ պտղատու ծառերին, որոնք պետք է որ զգալիորեն վնասված լինեին տասը տարի անտեսված լինելուց հետո: Գործով առկա չէ որեւէ տարր, որն այլ եզրակացության հանգելու հիմք կտար: Ուստի, այդ իրերի առնչությամբ, պահանջվող վնասի հատուցման եւ հիմնական վճռով հայտնաբերված շարունակական խախտումների միջեւ պատճառահետեւանքային կապ չկա: Հետեւաբար, սույն մասով որեւէ շնորհում չի կարող տրամադրվել:

յ) Աշխատավարձերի, կենսաթոշակների եւ խնայողությունների կորուստը

46. Բացի այդ, դիմումատուն պահանջել է հատուցում 1992 թվականից ի վեր աշխատավարձերից եւ կենսաթոշակներից ստացվող եկամտի կորստի դիմաց: 2002 թվականի ապրիլի 15-ին նախորդող ժամանակահատվածի համար որեւէ շնորհում չի կարող տրամադրվել: Ինչ վերաբերում է Կոնվենցիան ուժի մեջ մտնելուն հաջորդող ժամանակահատվածին, ապա Դատարանը համարում է, որ հիմնական վճռով հայտնաբերված խախտումների եւ ենթադրյալ վնասի միջեւ պատճառահետեւանքային կապ չկա: Հայտարարված կորուստները ոչ թե անմիջական կապ ունեն դիմումատուի համար իր գույքային իրավունքները վերականգնելու կամ այդ իրավունքներից օգտվելու հնարավորության կորստի դիմաց հատուցում ստանալու անհնարինության հետ, այլ ավելի շուտ կապված են 1992 թվականին Գյուլիստանից նրա տեղահանման եւ հակամարտության ընդհանուր հետեւանքների հետ: Նույն կերպ, Ադրբեջանի խնայքանկում ներդրված խնայողությունների կորստի եւ հիմնական վճռով հայտնաբերված խախտումների միջեւ պատճառահետեւանքային կապ առկա չէ: Ավելին, այդ կորուստները գանգատի առարկան չէին: Դրանց մասին առաջին անգամ նշվել է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման վերաբերյալ 2012 թվականի մայիսի 21-ին ներկայացված փաստարկներում: Այսպիսով, աշխատավարձերի,

կենսաթոշակների եւ խնայողությունների համար շնորհում չի կարող տրամադրվել:

ձ) Դիմումատուի հողից ստացվող եկամտի կորուստը եւ վարձակալական ու ապրուստի հետ կապված լրացուցիչ ծախսերը

47. Դատարանը համարում է, որ նյութական վնասի դիմաց հատուցումը սկզբունքորեն կարող է շնորհվել դիմումատուի հողից առաջացած եկամտի կորստի դիմաց՝ Ադրբեջանի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուն հաջորդող ժամանակահատվածի համար: Այն նաեւ ընդունում է, կրկին այդ ժամանակահատվածի առնչությամբ, որ դիմումատուն կրել է որոշակի լրացուցիչ վարձակալական եւ ապրուստի հետ կապված ծախսեր, չնայած դրանք ենթակա են հաշվանցման Հայաստանում ստացած դրամական միջոցների նկատմամբ: Այդուհանդերձ, Դատարանը նշում է, որ սույն մասերով նյութական վնասի գնահատումը նաեւ ծանրաբեռնված է շատ անհատակություններով եւ դժվարություններով:

48. Այդ դժվարությունների մի մասը կապված է այն փաստի հետ, որ հիմքում ընկած հակամարտությունը դեռեւս լուծված չէ, ինչպես նաեւ Գյուլիստանի կոնկրետ իրավիճակի հետ: Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո առ այսօր Գյուլիստանը դատարկված գյուղ է, որտեղ շինությունների մեծ մասը փլված է: Այն գտնվում է Ադրբեջանի եւ «ԼՂՀ»-ի հակամարտող զորքերի միջեւ (հիմնական վճռի §§ 134 եւ 197): Այդ հանգամանքներում դիմումատուի գույքի օգտագործման կորստի վերաբերյալ որեւէ վավեր տվյալ ձեռք բերել հնարավոր չէ: Ոչ էլ նպատակահարմար է օգտագործման կորուստը գնահատել՝ հաշվի առնելով հողերի վարձակալության՝ ըստ գույքի շուկայական արժեքի տոկոսի հաշվարկված տարեկան վճարը, որը կարող էր ստացվել Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակահատվածում (ի հակադրություն դրա՝ *Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի* (հողված 50)՝ վերելում հիշատակված, § 33):

49. Առաջին դժվարության հետ սերտ կապ ունեցող մեկ այլ դժվարություն էլ վերաբերում է փաստաթղթերի բացակայությանը կամ մատչելի չլինելուն: Գյուլիստանում գտնվող իր բնակելի տան եւ հողի վերաբերյալ դիմումատուի կողմից ներկայացված հիմնական փաստաթուղթը բնակելի տան՝ 1991 թվականի մայիսին, այսինքն՝ դեռեւս Խորհրդային Միության ժամանակաշրջանում տրված տեխնիկական անձնագիրն է (տե՛ս հիմնական վճռի §§ 154 եւ 192): Տեխնիկական անձնագիրը հողի մասով գնահատում չի պարունակում: Դա մասամբ կարող է բացատրվել այն փաստով, որ այն ժամանակ, երբ հողակտորը հատկացվել է դիմումատուին, Խորհրդային Միության իրավական համակարգի համաձայն, հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք գոյություն չի ունեցել, եւ փոխարենն այն նրան է տրվել «օգտագործման իրավունքով» (այդ ժամանակ հողի նկատմամբ գործող իրավունքների մանրամասն նկարագրության համար տե՛ս հիմնական վճռի §§ 201-203): Ինչ վերաբերում է Դատարանի *ratione temporis* իրավասության շրջանակներում գտնվող ժամանակահատվածին, ապա գույքի արժեքի կամ դրանից ստացվելիք որեւէ եկամտի վերաբերյալ որեւէ փաստաթուղթ չկա:

ե) Եզրակացությունը նյութական վնասի մասով

50. Որպես եզրակացություն՝ Դատարանը համարում է, որ նյութական վնասի դիմաց որոշակի հատուցում կարող է շնորհվել միայն երկու մասերով, մասնավորապես՝ դիմումատուի հողից ստացվող եկամտի կորստի եւ վարձակալական ու ապրուստի հետ կապված լրացուցիչ ծախսերի: Թեեւ Դատարանն ընդունում է, որ դիմումատուն, որն ապրել է Գյուլիստանում գտնվող իր բնակելի տանը եւ իր եկամտի մի մասն ստացել է իր հողի վրա հողագործությամբ զբաղվելով, Հայաստանում պետք է որ կրած լինի ապրուստի հետ կապված լրացուցիչ ծախսեր, սակայն դիմումատուի հողից ստացվող եկամտի կորստի գնահատման առնչությամբ անորոշությունը խոչընդոտում է նաեւ ապրուստի հետ կապված ծախսերի տարբերության ցանկացած հստակ հաշվարկ: Գնահատումը նաեւ բարդացված է այն փաստով, որ այն ներառում է

երկու տարբեր երկրների տնտեսական վիճակի համեմատություն, որոնք, նաեւ, ժամանակի ընթացքում պետք է որ զգալիորեն զարգացած լինեն: Հաշվի առնելով այդ բոլոր տարրերը՝ Դատարանը համարում է, որ դիմումատուի կրած նյութական վնասը ենթակա չէ հստակ գնահատման:

iii) Ոչ նյութական վնասը

51. Դատարանը համարում է, որ դիմումատուն այդ երկարաձգված, լուծում չստացած իրավիճակի, Գյուլիստանում գտնվող իր բնակելի տան եւ այլ գույքի ու իր բարեկամների գերեզմանների ճակատագրի վերաբերյալ անվստահության եւ դրանից բխող հոգեկան ապրումների եւ տառապանքի արդյունքում պետք է որ կրած լինի ոչ նյութական վնաս:

52. Դատարանը համարում է, որ սույն գործով խախտում հայտնաբերելն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում չէ կրած ոչ նյութական վնասի դիմաց: Ինչպես նշվել էր հիմնական վճռում, պատասխանող Կառավարության կողմից ձեռնարկված միջոցները՝ ուղղված ներքին տեղահանման ենթարկված հարյուր հազարավոր անձանց աջակցություն տրամադրելուն, պատասխանող Կառավարությանը չեն ազատում մեկ այլ խմբի, մասնավորապես՝ հակամարտության ժամանակ դիմումատուի նման փախուստի դիմած հայերի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից: Պարզվում է, որ մինչ այժմ Կառավարության կողմից չեն կիրառվել գույքը հետ պահանջելու մեխանիզմ կամ այլ միջոցներ, որոնցից կարող էին օգտվել դիմումատուի իրավիճակում գտնվող անձինք (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը, ինչպես նաեւ հիմնական վճռում առկա նկատառումները, §§ 238-240): Հետեւաբար, այս գործը տարբերվում է *Դողանը եւ այլք* գործից (վերելում հիշատակված, § 61), որում Դատարանը համարել է, որ հաշվի առնելով պատասխանող պետության իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցները՝ ուղղված դիմումատուների եւ ներքին տեղահանման ենթարկված այլ անձանց իրավիճակը շտկելուն, հիմնական վճիռն

ինքնին արդարացի փոխհատուցում էր՝ Կոնվենցիայի 8-րդ ու 13-րդ հոդվածների եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումներից առաջացած ցանկացած ոչ նյութական վնասի համար:

iv) Ընտանիքի անդամների՝ հատուցում ստանալու իրավունքը

53. Ի պատասխան Կառավարության փաստարկների՝ Դատարանը կրկին նշում է, որ ընտանիքի այն անդամները, որոնք դիմումատուի մահվանից հետո գանգատով վարույթը շարունակելու իրավունք ունեն, կարող են նաեւ դիմումատուի տեղը զբաղեցնել արդարացի փոխհատուցման պահանջների առնչությամբ՝ եւ՝ նյութական (տե՛ս *Մալիոուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [ՄՊ] [*Malhous v. the Czech Republic* [GC]], թիվ 33071/96, §§ 67-68, 2001 թվականի հուլիսի 12), եւ՝ ոչ նյութական վնասի դիմաց (տե՛ս, օրինակ, *Յեչիուսն ընդդեմ Լիտվայի* [*Ječius v. Lithuania*], թիվ 34578/97, §§ 41 եւ 109, ՄԻԵԴ 2000-IX. *Ավչին եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Avcı and Others v. Turkey*], թիվ 70417/01, § 56, 2006 թվականի հունիսի 27. այնուամենայնիվ, ի տարբերություն *Մալիոուսի* գործի՝ վերելում հիշատակված, § 71, որտեղ համարվել էր, որ խախտումն ազդեցություն չէր ունեցել անձամբ իրավահաջորդի վրա): Ավելին, Դատարանը ոչ նյութական վնասների մասով շնորհում է տրամադրել դիմումատուի որդուն՝ նրա կողմից շարունակվող գործով, որը վերաբերում էր կենսաթոշակ նշանակելու գործով վարույթի ոչ ողջամիտ տեսողությանը, ոչ միայն այն ժամանակահատվածի համար, երբ դիմումատուն կենդանի է եղել, այլեւ նրա մահվանից հետո ընկած ժամանակահատվածի համար, որի ընթացքում ներպետական վարույթը շարունակվել էր նրա որդու կողմից՝ որպես դիմումատուի ժառանգ (*Էռնեստինա Չուլլոն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Ernestina Zullo v. Italy* [GC]], թիվ 64897/01, §§ 115-116 եւ 148-149, 2006 թվականի մարտի 29):

54. Կառավարությունը կարծես թե պնդում է, որ մահացած դիմումատուի ընտանիքի անդամները չեն կարող հատուցում պահանջել 2009 թվականի

ապրիլին նրա մահվանը հաջորդող ժամանակահատվածի համար: Հաշվի առնելով քննարկվող խախտումների հատուկ բնույթը, մասնավորապես՝ դիմումատուի՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով եւ Կոնվենցիայի 8-րդ ու 13-րդ հոդվածներով սահմանված իրավունքների շարունակական խախտումները՝ Դատարանը համարում է, որ դիմումատուի մահվանը հաջորդող ժամանակահատվածը հատուցումը շնորհելիս հաշվի չառնելն անհարկի ձեւականություն կլիներ: Ինչպես ցույց է տրվել վերելում, վարույթի ոչ ողջամիտ տեսողությանը եւ, հետեւաբար, շարունակականության տարր պարունակող խախտմանը վերաբերող գործում արդարացի փոխհատուցում շնորհելը պարտադիր չէ, որ սահմանափակվի մինչեւ դիմումատուի մահն ընկած ժամանակահատվածով: Դիրքորոշումը կարող է այլ լինել, եթե գանգատով վարույթը շարունակվում է ոչ թե դիմումատուի մերձավոր ազգականի, այլ նրա գույքի կառավարչի կողմից (*Սոլոմոնիդեսն ընդդեմ Թուրքիայի* (արդարացի փոխհատուցում) [*Solomonides v. Turkey* (just satisfaction)], թիվ 16161/90, §§ 42-43 եւ 47, 2010 թվականի հուլիս 27), կամ եթե հայտնաբերված խախտումը չի ազդում անձամբ դիմումատուի մերձավոր ազգականի վրա, որը շարունակում է գանգատով վարույթը (տե՛ս *Մալհոուսի* գործը՝ վերելում հիշատակված, § 71):

55. Սույն գործով Դատարանը կրկին նշում է, որ դիմումատուն եւ նրա ընտանիքն ապրել են Գյուլիստանում, որտեղ դիմումատուն իր եկամուտը ստացել է իր աշխատավարձից՝ որպես միջնակարգ դպրոցի ուսուցիչ, եւ իր հողի վրա հողագործությամբ ու անասնապահությամբ զբաղվելով, իսկ նրա կինն աշխատել է գյուղի կոլեկտիվ տնտեսությունում: Ուստի, նրանք ստեղծել են տնային տնտեսական միավոր: Դիմումատուն եւ նրա կինն իրենց կյանքի մեծ մասն ապրել են Գյուլիստանում՝ մինչեւ 1992 թվականի հունիսին նրանց հարկադիր տեղահանումը: Հետեւաբար, դիմումատուի կինը եղել է ճիշտ նույն իրավիճակում, ինչ դիմումատուն, եւ դիմումատուի՝ Գյուլիստանում գտնվող գույքից եւ տնից օգտվելու հնարավորության կորուստը եւ այդ առնչությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայությունն ազդել են անձամբ

նրա վրա: Դա ավելի քիչ չափով վերաբերում է նաեւ դիմումատուի չափահաս երեխաներին: Ավելին, համարելով, որ խախտվել են եւ շարունակում են խախտվել դիմումատուի՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքները, Դատարանը հաշվի է առել նրա մահվանը հաջորդող ժամանակահատվածը (հիմնական վճիռ, §§ 241-242, 260-261 եւ 273): Այդ եզրակացությանը հանգելով՝ Դատարանը գտել է, որ դիմումատուն դեռեւս ունեցել է գործող գույքային իրավունքներ իր բնակելի տան եւ հողի նկատմամբ (նույն տեղում, § 205): Հակառակն ապացուցող որեւէ տեղեկության բացակայության պարագայում, դիմումատուի կինը եւ 2014 թվականին նրա մահվանից հետո նրանց երեխաները պետք է համարվեն այդ իրավունքների իրավահաջորդներ: Հաշվի առնելով այդ բոլոր գործոնները՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուի այն մերձավոր ազգականին, որը նրա անունից շարունակել է գանգատով վարույթը, կարող է շնորհվել հատուցում՝ սույն գործով քննվող ամբողջ ժամանակահատվածի համար:

v) Ընդհանուր եզրակացություն

56. Ինչպես հետեւում է վերոնշյալ նկատառումներից, դիմումատուն որոշակի նյութական կորուստների եւ ոչ նյութական վնասի համար հատուցման իրավունք ունի: Դատարանի կարծիքով, նյութական եւ ոչ նյութական վնասները սերտորեն կապակցված են: Կրած վնասը վերը նշված պատճառներով ենթակա չէ ճշգրիտ հաշվարկման (տե՛ս 39-րդ, 48-50-րդ պարբերությունները): Գնահատման ընթացքում հետագա դժվարությունները բխում են ժամանակն անցնելուց: Ինչպես Դատարանն ընդունել է (տե՛ս վերելում՝ 48-րդ պարբերությունը), ժամանակի տարրը Կոնվենցիայի խախտման եւ վնասի միջեւ կապը պակաս հստակ է դարձնում: Այս նկատառումը հատկապես ակնառու է դիմումատուի գույքային իրավունքների շարունակական խախտմանը վերաբերող սույն գործում, որում արդեն գրեթե տասը տարի էր անցել Գյուլիստանից դիմումատուի տեղահանման եւ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու միջեւ, եւ մոտ տասնհինգ տարի է անցել դրանից հետո: Փոխհատուցում, այնուամենայնիվ, կարող է շնորհվել՝ չնայած

ընդգրկված մեծ թվով անկանխատեսելի գործոններին: Շնորհվող արդարացի փոխհատուցման չափը պետք է որոշվի Դատարանի հայեցողությամբ՝ հաշվի առնելով այն, թե Դատարանն ինչն արդար կհամարի:

57. Որպես եզրակացություն՝ Դատարանը հաշվի է առնում պատասխանող պետության՝ Կոնվենցիայի խախտման հետեւանքների համար հատուցում կատարելու առաջնային պարտավորությունը, եւ եւս մեկ անգամ ընդգծում է երկու շահագրգիռ պետությունների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընդունելի լուծում գտնելու պատասխանատվությունը: Մինչեւ քաղաքական մակարդակով լուծում տրվելը՝ Դատարանը սույն գործով նպատակահարմար է համարում շնորհել նյութական եւ ոչ նյութական վնասի հատուցման ընդհանուր գումար: Դատարանը, իր գնահատումը կատարելով արդարության սկզբունքի հիման վրա, դիմումատուին շնորհում է 5 000 եվրո՝ վնասի բոլոր մասերով, գումարած այդ գումարից գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

1. Կողմերի փաստարկները

58. Դիմումատուն Դատարանի վարույթում կրած ծախսերի դիմաց պահանջել է հետեւյալ գումարները՝ 37 062.50 ֆունտ ստեռլինգ (ՄԲՖ) Լոնդոնի իր իրավաբանների կողմից 150 ՄԲՖ/ժ դրույքաչափով կատարված 247 ժամ եւ 5 րոպե աշխատանքի համար, եւ 38 500 եվրո՝ Հայաստանի իր ներկայացուցիչների կողմից 100 եվրո/ժ դրույքաչափով կատարված 384 ժամ եւ 20 րոպե աշխատանքի համար: Նա մանրամասն ժամանակացույցներ է ներկայացրել նշված յուրաքանչյուր իրավաբանի մասով: Ի հավելումն դրա՝ նա պահանջել է հատուցում՝ 348.33 ՄԲՖ՝ Լոնդոնի իր իրավաբանների առձեռն ծախքերի համար եւ 1 737 եվրո՝ Հայաստանի իր ներկայացուցիչների առձեռն

ծախքերի համար: Այն ծախքերի մասով, որոնց դիմաց փոխհատուցում է պահանջվում, նա ներկայացրել է օժանդակ փաստաթղթեր:

59. Դիմումատուն պնդել է, որ Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ մեկից ավելի իրավաբանի կողմից ներկայացվելը, ինչպես նաև տարբեր իրավագործություններում գործող իրավաբանների կողմից ներկայացվելը կարող է հիմնավորվել: Դատարանն այդպիսի գործերով նաև ընդունել է, որ վճարների չափերը տարբերվել են Պայմանավորվող մեկ պետությունից մյուսը, եւ որ տարբեր իրավագործությունների իրավաբաններ վարձելը կարող էր ներառել գործի կարելու փաստաթղթերը թարգմանելու անհրաժեշտություն:

60. Կառավարությունը համարել է, որ դիմումատուի պահանջները չափազանցված են: Ընդունելով առնվազն մեկ հայ իրավաբանի եւ Դատարանի վարույթին ծանոթ՝ մարդու իրավունքների հետ կապված գործերով իրավաբանի կողմից ներկայացվելու անհրաժեշտությունը՝ այն վիճարկել է եւ՝ Լոնդոնում, եւ՝ Հայաստանում գտնվող իրավաբանների խմբի կողմից դիմումատուին ներկայացնելու անհրաժեշտությունը: Այն Դատարանից պահանջել է իրականացնել դիմումատուի կողմից ծախսերի եւ ծախքերի մասով ներկայացված պահանջի մանրամասն գնահատում:

2. Դատարանի գնահատականը

61. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի այն ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք, որոնք համարվել է, որ իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ դրանց չափը եղել է ողջամիտ (տե՛ս, ի թիվս շատ այլ վճիռների, *Սենտրոն Եվրոպա 7 Ս.Ն.Լ-ի եւ Դի Սպեֆանոյի գործը*՝ վերելում հիշատակված, § 223, եւ *Ալիշիչը եւ այլք գործը*՝ վերելում հիշատակված, § 158):

62. Հաշվի առնելով սույն գործի բնույթը՝ Դատարանն ընդունում է երկու հայ իրավաբանների եւ Միացյալ Թագավորության՝ մարդու իրավունքների

միջազգային պաշտպանության ոլորտում մասնագիտացած իրավաբանի կողմից ներկայացվելու անհրաժեշտությունը (*Քուրթն ընդդեմ Թուրքիայի [Kurt v. Turkey]*, 1998 թվականի մայիսի 25, § 179, *Ձեկույցներ 1998-III*): Դատարանը նաև նշում է, որ դռնբաց լսմանը կամ հետազոտություն իրականացնելիս խորհրդատուների աջակցությունը կողմերի պաշտպաններին արտասովոր չէ:

63. Ավելին, Դատարանն ընդունում է, որ գործով բարձրացվել են փաստերին ու իրավունքին առնչվող բարդ հարցեր: Դատարանը մասնավորապես դիտարկում է, որ դրանով պահանջվել է փաստերի հավաքում, Մեծ պալատում երկու դռնբաց լսման անցկացում եւ դիտարկումների բազմաթիվ խմբերի ներկայացում: Դրանով նաև բարձրացվել են իրավական կարեւոր հարցեր, եւ հարյուրավոր հաջորդող գործերի համար այն ծառայել է որպես գերակա նախադեպային գործ: Այդուհանդերձ, Դատարանը համարում է, որ ծախսերի մասով պահանջվող ընդհանուր գումարը չափից ավելի է: Վերջապես, Դատարանը նշում է, որ դիմումատուն իրավաբանական օգնության միջոցով ստացել է 3 940.64 եվրո:

64. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած տեղեկությունները եւ վերոնշյալ չափորոշիչները՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 30 000 եվրո՝ դիմումատուի բոլոր ծախսերը եւ ծախքերը ծածկելու համար:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

65. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Վճռում է, որ

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է պրն Վլադիմիր Սարգսյանին եւ տկն Ծովինար Սարգսյանին համատեղ վճարի հետեւյալ գումարները.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 5 000 եվրո (հինգ հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 30 000 եվրո (երեսուն հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

2. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով ու ֆրանսերենով եւ գրավոր ծանուցվել է 2017 թվականի դեկտեմբերի 12-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Յոհան Բոլուերթ

Գուիդո Ռայմոնդի

Քարտուղարի տեղակալ

Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում է դատավոր Հուսեյնովի առանձին կարծիքը:

Գ.Ռ.

Յ.Ք.

ԴԱՏԱՎՈՐ ՀՈՒՍԵՅՆՈՎԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Թեեւ ես համամիտ չեմ Մեծ պալատի՝ սույն գործով իր հիմնական վճռում առկա եզրահանգումներին, սակայն դա վարույթի այս փուլում ուսումնասիրության ենթակա հարց չէ: Չլինելով հիմնական վճիռն ընդունած դատական կազմի անդամ՝ ես դրանով պարտավորված եմ՝ օրենքին համապատասխան: 41-րդ հոդվածն այդ հանգամանքների ներքո դիտարկելով՝ ես ստիպված եմ քվեարկել սույն վճռի օգտին: